

ՆԱԽԱՐԱՐ ՄԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՍՏԱՆԶՆԵՑ ԻՐ ՊԱՇՏՈՆԸ




Նախարար Յովնանեան խօսքի պահունգ ճախին՝ ճախարարութեան տնօրէն Զէյտ Իսիամէ:

Երէկ, երիտասարդութեան եւ մարմնակրթանքի նախարար Սեպուհ Յովնանեան ստանձնեց իր պաշտօնը՝ նախարարութեան ընդհանուր տնօրէն Զէյտ Իսիամէի եւ նախարարութեան պաշտօնէաներու ներկայութեան: Չէյտ Իսիամէ ողջունեց նախարարը, յոյս յայտնելով, որ այս նոր նախարարութիւնը կը դրուի ամուր հիմներու վրայ: Նախարար Ս. Յովնանեան ըսաւ, թէ այս նախարարութեան ստեղծումը ինքնին կը վկայէ այն հոգատարութիւնը, որ գոյութիւն ունի երիտասարդութեան նկատմամբ: Ան աւելցուց, որ պիտի ստեղծուի նոր վարչակազմ, որ պէտք է իրագործէ նախարարութեան պարտականութիւնները եւ յատուկ աշխատանքային հանդիպումի մը (workshop) հրաւիրեց բոլոր անոնք, որոնք կ'ուզեն օժանդակել նախարարութեան աշխատանքներուն: հանդիպումին նիւթն է՝ «Երիտասարդութիւնը եւ մարմնակրթանքը ներկայի հայերէն եւ մեր ապագային հունը»:

Պատասխանելով կառավարութեան մէջ երկուրորդ հայ նախարարի մը նշանակման մասին հարցումի մը, նախարար Ս. Յովնանեան ըսաւ, թէ նախագահը եւ վարչապետը նախարարաց խորհուրդի նիստին ընթացքին խոստացած են լուծել այս խնդիրը: Ապա նախարար Ս. Յովնանեան աշխատանքային հանդիպում ունեցաւ ընդհանուր տնօրէն Զ. Իսիամէի հետ:

ԱՐԱՖԱՐ - ՄՈՐԱԹԻՆՈՍ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Արաֆար եւ Մորաթինոս (աջից):

Պաշտօնէան իշխանութեան նախագահ Եւսէր Արաֆար երէկ տեսակցութիւն ունեցաւ Եւրոպական Միութեան պատուիրակ Միկէլ Անիէլ Մորաթինոսի հետ: Տեսակցութեան ավարտին, Մորաթինոս ըսաւ, որ կայացուցած արժեքները արժեքներ են հիմա քան ինչ որ էին երբ շարժուած էին: Ան կ'ակնարկէր արիւնահեղութեան վերջ տալու պահանջներն եւ իսրայէլեան ճիգերուն:

Եւրոպացի պատուիրակը ըսաւ նաեւ, որ իր առաջնութեան նպատակն է օժանդակել հակամարտ կողմերուն, վերջնական խոչընդոտները վերահաստատելու համար վստահութիւնը եւ վերականգնելու խաղաղութեան բանակցութիւններուն: Մորաթինոս դիտել տուաւ սակայն, որ տակաւին ամէն ինչ չէ լուծուած եւ կայացուցիչ կը մնայ դիւարակ:

Արաֆար իր կարգին ըսաւ, որ Միացեալ Նահանգներ եւ Եւրոպական Միութիւնը իրենց առաջնութիւնը կ'ընեն վերջ տալու տարբերակները: Մորաթինոս ըսաւ, որ տակաւին ամէն ինչ չէ լուծուած եւ կայացուցիչ կը մնայ դիւարակ:

Պաշտօնէան իշխանութեան կը

ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ 12ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԳԻՒՄՐԻ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Սպիտակի երկրաշարժին 12րդ տարելիցին առիթով երէկ Գիւմրի այցելեց: Ժամը ճիշդ 11:41ին, նախագահ Քոչարեան ծաղկեպսակ վետեղեց Գիւմրիի Շիրակ գերեզմանատան մէջ, Անժանօթ Չոհեբու յուշարձան - խաչքարին:

Շարք՝ էջ 10

ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՅՍՕՐ ՊԵՅՑԵԿԵՆ ԵՐԵՒԱՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

ԵՐԵՒԱՆ, 7 (ԱՐՄԵՆԻՅԱ) - Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան Չինաստան այցելութեան շրջագիծին մէջ Հինգշաբթի օր Շանհայի Պէյճինգի վերադարձաւ: Ուր այցելեց Չինաստանի մէջ Հայաստանի դեսպանատուն: Վարչապետ Մարգարեան դեսպանատան աշխատակիցներուն հետ քննարկած է այցելութեան արդիւնքները եւ յստակացուցած նախատեսուած ծրագիրներու իրագործման ուղղութեամբ որդեկրուելիք քայլերը:

Դեսպանատան մէջ նշուեցաւ նաեւ Սպիտակի երկրաշարժին 12րդ տարելիցը: Վարչապետ Մարգարեանի գլխավորած պատուիրակները Ուրբաթ օր Երեւան կը վերադառնան:

ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՅԱՅԿԱԿԱՆ ՑԵՆԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԵ ԶԱՐԿԱՅԻ 24 ԱՊՐԻԼԻՆ, ԻՍԿ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՅՈՒՆԻՄԱՐԻՆ

Ֆրանսայի եւ Իրանի խորհրդարանները Յունուար եւ Ապրիլ 2001ին պիտի քննարկեն Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցը: «Միլիիթ» թերթին համաձայն, Ֆրանսայի խորհրդարանին մէջ հարցը պիտի քննարկուի 16 կամ 18 Յունուար 2001ին: Իսկ Իրանի խորհրդարանին մէջ հարցը պիտի քննարկուի 24 Ապրիլին: Հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեան յայտնած է, որ հարցը 24 Ապրիլին քննարկելու մասին որոշում կայացած է: Միւս կողմէ, Արաբիանի Ժողովրդական Շարժում կուսակցութիւնը յայտարարեց, որ Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյի քննադատած է խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան քննարկումը: «Մենք կը նկատենք, որ այս քննադատութիւնը տեղին պատասխան մըն էր այն բոլոր հայաւետ ուժերուն, որոնք կը փորձեն շրջանին մէջ հարցը ստեղծել, կը նշուի կուսակցութեան կողմէ հրապարակուած յայտարարութեան մէջ:

ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԱՆԴԱՍԱԿՑԻԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՀԱՐՑ ՄԸ ՉԷ

Արաբիանի նախագահ Հայտար Ալիե՛ յայտնեց, որ ինք չի կարծեր, թէ իր երկիրը չի կրնար գոյատեւել առանց Երոպական խորհուրդին անդամակցելու: Արաբիանի մէջ Բրիտանիոյ դեսպանին հետ հանդիպումի ընթացքին Ալիե ըսաւ, որ Երոպայի 9 տարիէ ի վեր մենք կը գոյատեւենք իբրեւ անկախ պետութիւն եւ ցարդ այդ կազմակերպութեան անհրաժեշտութիւնը չէ պզտցուած: Անհրաժեշտ միակ բանը հայ - արաբական տարաբանութիւնը լուծման օժանդակել է, իսկ այդպիսի օժանդակութիւն ցարդ չէ ցուցաբերուած: Ինչպէս Երոպական խորհուրդին անդամակցելը կամ չանդամակցելը մեզի համար մեծ հարց մը չէ»:

(*ԱՅՆՈՒՐ*)

ԳՈՐԾԱՐԱՐ Ա. ՂԱԶԱՐԵԱՆ Կ'ՈՒՐԱՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Թրքական «Հիւրիլիթ» թերթին համաձայն, Թուրք-Հայկական առեւտրական խորհուրդի համանախագահ Արսէն Ղազարեան, որ Թուրքիա կ'այցելէ, յայտնած է, թէ «Թուրքիա եկած եմ յարաբերութիւնները կարգաւորելու համար: Մենք պէտք է սկսինք երկխոսութեան եւ եւ ըրաբի կամքի պատգամ բերած եմ Հայաստանի նախագահին եւ արտաքին գործոց նախարարին կողմէ»:

Շարք՝ էջ 10

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՆՈՒԹ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԳԱԿ»Ի ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայակոչական լինողի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 Վրանահանապետութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ՝

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը յիշեց...
- Յիշատակելիները
- Հ.Յ.Դ.Ի եւ հայութեան դէմ ոճիրներ
- Հայրենական արձագանքներ
- Ափիւրեան արձագանքներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

Ստանալ «Ավդակ»ի ցրուելիներէն կամ հետեւեալ գրախանութիւններէն. - «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆալեան», "Obelix" եւ «Կոմիտաս»: Սակ՝ 15,000 Լ. -:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՐՄԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

Երէկ, երեկոյեան ժամը 7:00ին, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան Հայաստանի դեսպանատան մէջ ունեցաւ հանդիպում մը լիբանանահայ հայրեր կառուցներու եւ կազմակերպութիւններուն ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումը կը նպատակադրէր պարզել Հայաստանի մէջ քրիստոնէութեան փոփոխութեան կրօն հոգակման 1700ամեակի առիթով Լիբանանի մէջ դեսպանատան ծրագրած գործունէութիւնը, ինչպէս նաեւ՝ ապահովել լիբանանահայ միութիւններուն գործակցութիւնը եւ այս առիթով սոյն հարցին շուրջ լսել անոնց առաջարկներն ու տեսակէտները:

Հանդիպումին ներկայ գտնուեցան Հ. Յ. Դաշնակցութեան, Ս. Դ. Հ. Կ. Ի, ՌԱԿԻ, Համազգայինի, Հ. Մ. Ը. Մ. Ի, Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. Ի, Ազգային Առաջնորդարանի, Կաթողիկէ Պատրիարքարանի եւ Հայ Արուեստագէտներու Միութեան ներկայացուցիչներ:

Հանդիպումին սկիզբը Արման Նաւասարդեան ներկայացուց 1700ամեակի եւ Ֆրանսախոս երկիրներու կազմակերպութեան Հայաստանի անդամակցութեան մասին վերջերս իր ունեցած հանդիպումները՝ Լիբանանի նախագահին, վարչապետին եւ նախարարներուն հետ: Ան նաեւ ներկայացուց յառաջիկայ տարուան իրագործուելիք ծրագիրներու հետեւեալ յայտագիրը:



Դեսպանը խօսքի պահունգ:

- Երեւանի Ակադեմիական Օփերայի ելուցներ
- Երեւանի Սենեկային Նուագախումբի ելուցներ
- Հայ նկարիչներու մեծ ցուցահանդէս
- Լիբանանի մէջ հայկերէն դպրոցի հիմնադրումը
- Հայաստանի մէջ լիբանանեան մշակուցի շարժումը
- Հայկական գիւղատնտեսական արտադրութիւններու ցուցահանդէս
- Դեսպանը խօսքի պահունգ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ ԱՐՄԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՅԻՔ ՀԱՐԻՐԻԻ

Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հաբիբի եւ անոր փոխանցեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի շնորհաւորական նամակը: Քննարկուեցաւ երկկողմանի յարաբերութեանց ներկայ կացութիւնը: Մասնաւորաբար քննարկուեցան տնտեսական մարզին մէջ երկու երկիրներու համագործակցութեան կապուած հարցեր:

Դեսպան Նաւասարդեան վարչապետին ներկայացուց Հայաստանի մէջ քրիստոնէութեան ընդունման 1700ամեակի նուիրում ձեռնարկներուն յայտագիրը, 2001ին Պէյրութի մէջ ֆրանսախոս երկիրներուն վեհաժողովին Հայաստանի մասնակցութեան, ինչպէս նաեւ սոյն կազմակերպութեան Հայաստանի անդամակցութեան հարցը:

Դեսպան Նաւասարդեան երէկ տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ պրօպագանդային նախարար Քարամ Քարամի հետ: Քննարկուեցան պրօպագանդային մարզին մէջ երկու երկիրներուն գործակցութեան կապուած հարցեր:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ Ն. ՍԱՐԱՓԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

26 Նոյեմբերին Փարիզի Ֆրանսահայ Գրողների Միության կազմակերպությունում Հ. Բ. Լ. Մ. Ֆ. Ս. Սարափեանը «Ա. Մանուկեան» արահին մէջ տեղի ունեցած է գրական երեկոյ մը՝ նուիրուած Նիկողոս Սարափեանի նոր լոյս տեսած «Մայրի ցաւեր» հատորին:

«Մշտոյց» մատենաշարի կողմէ հրատարակուած եւ կրկնակրկով կաթողիկոսարանի տպարանէն լոյս տեսած այս գիրքը յաջորդարար մէկտեղած է Հետեւեալ երեք գրութիւնները՝ «Միջերկրականը եւ հայրը», «Մայրի ցաւեր» եւ «էքս լէ Պէնի մէջ»:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանած է Արփի թոթոյեան, որ նաեւ փոխանցած է գիրքին մասին տեղեկութիւններ: Ապա Թիւրքի Չոլաբեան կատարած է «Մայրի ցաւեր»էն ընթացումներ:

Ձեռնարկին ընթացման խօսք առած է օրուան բանաստեղծ Վահագն Սարգսյանը: Պրիզի Ֆրանսահայ Գրողների Միության կողմէ յարգուած է Սարափեանի «Մայրի ցաւեր» գործին «ամուլտիւմը եւ ստեղծում» թեման: Մանրամասնութեամբ վերլուծելով Սարափեանի այս գործը՝ Պրիզի երեսնամեկուցած է, թէ բանաստեղծը եւ վաճառականը, ամուլտիւմը եւ ստեղծումը զիրար կը հակասեն, սակայն միշտ գոյուածի ունին:

Գրական երեկոյին աւարտին բանաստեղծ եւ մատենաշարի խմբագիրներէն Գառնիկ քննչ. Գոյուեանի եւ ներկայներուն միջեւ տեղի ունեցած է զրոյց:

ԳԱԿԻՐԷԻ ՄԷՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է Տ. ՉՈՒԽԱՃԵԱՆԻ «ԱՐՇԱԿ Բ.» ՕՓԵՐԱՆ

Գահիրէի մէջ լոյս տեսած է յորինող Տիգրան Չուխանեանի «Արշակ Բ.» օփերան՝ խմբագրուած ըստ հեղինակային ձեռագրին, որ կը գտնուի Երեսնի Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանկատարանի մէջ: Հրատարակութիւնը կը պարփակէ օփերանի բոլոր բաժիններուն եւ տարբեր նուագարաններուն նօթագրութիւնները, ինչպէս նաեւ զաշնակի վրայ փոխադրութիւնը:

Հրատարակութեան խմբագրութիւնը եւ երաժշտական քնննութիւնը կատարած է եղիպտոսահայ երաժշտագէտ Հայկ Աւագեան, որ տարբեր մասերուն կցած է ձեռագրագիրական մանրամասն ծանօթագրութիւններ: Օփերանի իտալերէն երգաթատերագիրին հետ կապուած լեզուական եւ թատերական խմբագրութիւնը ստանձնած է Փարիզի «Տիգրան Չուխանեան» հետազոտական կեդրոնը:

Հրատարակութիւնը հովանաւորած է Հ. Բ. Լ. Մ. Ֆ. Ս. Սարափեանի «Մանուկեան» հիմնադրամը: Հ. Բ. Լ. Մ. Ֆ. Ս. Սարափեանի մասնաճիւղը կը նպաստակարգէ Հայկ Աւագեանի խմբագրութեամբ հրատարակելի «Տիգրան Չուխանեանի անտիպ ստեղծագործութիւնները:

ՀՐԱՇՔ ՊԱՏԱՆԻ ՍԵՐԳԵՅՑ ԽԱԶԱՏՐԵԱՆ ԿԸ ԽԼԷ ԶՈՒԹԱԿԻ ՄՐՑԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Այնցեալ շաբաթ տեղի ունեցած Ժան Սիպիլիսը Ղուլթակի համալսարանի ութերորդ մրցումին առաջնութեան մրցանակը՝ տասնվեց հազար եւրօ, ստացած է Հայաստանի կողմէ մասնակցած 15 տարեկան Սերգէյ Խաչատրեան, որ մրցումին սկիզբէն զրաւած էր ունկընդիրներուն ուղարկութիւնը:

Ա. Խաչատրեան կը համարուի բացառիկ եւ տաղանդաւոր Ղուլթակահայ մը: Ըստ անոր գործավարին, Խաչատրեանի համար ներկայացուած համերգներու առաջարկները արդէն իսկ հաստ օրատեսուր մը կը լեցնեն: Սակայն անոր ծնողները կը նախընտրեն, որ իրենց զաւակը ամբողջացնէ իր ուսումը եւ ապա նետուի Ղուլթակահայի ասպարէզը:

Վերոյիշեալ մրցումին երկրորդ դիրքը զրաւած է ճափոնցի Ղուլթակահայ մը, իսկ երրորդ հանդիսացած են Հին Զի-ձիտի Ուանկ եւ ճափոնցի Սայաքս Քուսաքս:

ՊՐԱԶԻԼԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՈՒՆԻ

Պրազիլի հայ գաղութը, որուն թիւը կը հասնի մօտ 40 հազարի, բաւական ներկայացուցչական է: Երկրի արտաքին գործոց նախարարութեան համակարգին մէջ կ'աշխատի 23 հայ դիւանագէտներ, որոնց մէջ կան երկու դեսպաններ, նախագահի տնտեսական հարցերու խորհրդակցող, դաշնակցային, նահանգային եւ քաղաքային խորհրդարանի անդամներ, քաղաքապետներ, տնտեսագէտներ, իրաւաբաններ, ինչպէս նաեւ մշակութային եւ զինուորական գործիչներ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՄՕՏ ԿԸ ԿԱՌՈՒՑՈՒԹԻՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆԵՐ:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հաշիւներ 1700ամեակի յորիչնական ձեռնարկներու ծրագրին մէջ ընդգրկուած են Լուռի մարզի Հալբախի, Սանահինի եւ Օձունի եկեղեցիներուն շրջակայքի, մայրուղիին յուշարձաններ տանող ճամբաներուն բարեկարգումը եւ սոնակատարութիւններու օրբուռն սպասուող հիւրերուն եւ ուխտակներուն համար համապատասխան սպասարկութեան պայմաններու ստեղծումը:

Լուռի մարզպետ Հենրիկ Քոչինեան յայտնեց, թէ կարեւոր է նաեւ շրջան այցելոյներուն ժամանակակից պահանջներուն համապատասխան կացարաններու պահպանումը: Այդ խնդիրը լուծուելու համար, աւելցուցան, մարզի կեդրոն վանաձորի մօտ կը կառուցուի փոքր պանդոկ մը:

Աշխատանքներ կը տարուին նաեւ յարմար տուններ ապահովելու եւ զանոնք վարձքով զրօսաշրջիկներուն տրամադրելու ուղղութեամբ:

ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՕՊԱՆԱՌՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՂԵԿՎԱՎՈՐՈՒԹԻՒՆ

5 Դեկտեմբերին կայացած քաղաքացիական օղանակուող ութեան գլխաւոր վարչութեան նիստին ընթացքին, որուն մասնակցած են վարչութեան բոլոր ենթարածանումներուն պատասխանատուները, քննարկուած է աշխատանքներու բարելաւման հարցը:

Վարչութեան պետ Յովհաննէս Երիցեան, անդրադառնալով «Հայկական Աւերակներ» օղանակային ընկերութեան կողմէ ստորագրուած պայմանագիրներուն, յայտնած է, թէ ընկերութեան մէջ տիրած է «ալան թալանի» քաղաքականութիւնը եւ անօրինականութիւնը: Այս շրջագիւծէն ներս անհրաժեշտ է վարձի տիրահաշակ պայմանագիրը:

Օղանակուող սկզբնապէս վարձուած է 720 հազար տոյարի, իսկ եօթը ամիս ետք «Հայկական Աւերակներ» ու միջամտութեամբ վարձը իջած է 560 հազար եւ ապա՝ 345 հազար տոյարի:

Նախագիտ «Հայկական Աւերակներ» ընկերութեան մէջ տիրած է ընկերային արդարութեան բացակայութիւնը: Օղանակներու «վերնախաւ»ին աշխատավարձը քանի մը անգամով աւելի եղած է պարզ օղանակ ամսականէն, իսկ հանգստեան կողմէ օղանակներուն մէջ մասին ամսականը աւելի քան հազար տոյար է, իսկ ուրիշներն անգլուսեան» թոշակ չեն ստանար:

ԳԻՒՄՐԻԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՅՈՒՇԱՐՁԱՆԸ՝ ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ

5 Դեկտեմբերին Գիւմրիի մէջ վերաբացւած է քաղաքի «Փառքի եւ Աշխատանք»ի համալիրին «Հայաստան» յուշարձանը: Կնոթ կերպարանքով յուշարձանին մէջ թեւը ինկած էր եւ անոր կառուցը վնասուած էր փոթորիկներու եւ 1988ի երկրաշարժին պատճառով:

Հայ Օղանակութեան Հիմնադրամի նախագահութեամբ, ամբողջահայ ճարտարապետ Վաչէ Ասլանեանի գլխաւորած ամբողջահայ մասնագէտներու խումբը վերակաշինած է յուշարձանը: Յուշարձանին վերանորոգումը արժած է շուրջ տասը հազար տոյար:

Յուշարձանին վերաբացումը զուգարկուած է անոր քանահինգամեակին:

ԾԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՆ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ

5 Դեկտեմբերին Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը այցելեց Երեւանի մէջ կառուցուող Ս. Գրիգոր Լուսանորից Մայր եկեղեցի՝ հանդիպելու Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի, մանկավարժարանի հիմնադիր, ինչպէս նաեւ այլ բաժանմունքներու ուսանողներուն եւ երաժիշտ մանկավարժներուն հետ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշումով, 6 Դեկտեմբերին Ռոպերթ Չարգարեան նշանակուած է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան փոխ նախարար:

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՅՈՒՇԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւանի պետական, տնտեսագիտական եւ ճարտարագիտական համալսարաններու ներկայացուցիչներ Միացեալ Նահանգներու կառավարութեան հետ, ի դէմս Միացեալ Նահանգներու միջազգային զարգացման գործակալութեան (ԵՈՒ-Էս-Էյտ) Հայաստանի գրասենեակի տնօրէնի պաշտօնակատար Ճ. Չիմայի, 5 Դեկտեմբերին ստորագրեցին «համակարգչային ուսումնական կեդրոն» փորձնական ծրագրը իրականացնելու վերաբերող փոխմուճան յուշագիր մը: Մրցակրին նպատակն է աջակցիլ վերոյիշեալ համալսարաններու կրթական ձեռնարկներուն, տեղեկատուական եւ հաղորդակցութեան սարքաւորումներուն եւ միջոցներու բարելաւման գործին՝ հիմք ունենալով արդէն իսկ գործող կեդրոնները: Այս նպատակով համալսարաններուն տրամադրուած է 200 հազար տոյար:

«ԵՈՒ-Էս-Էյտ»ի կողմէ համաձայն ծրագիր իրականացուած է Երեւանի 12 պարտնէրու մէջ, իսկ 50 այլ զարգացնող մէջ պիտի իրականացուի 2001 թուականին:

ՅՐԱՆՍԱ ԿՕՏԱՆԴԱԿԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԵՐԱՇՏԸ ԴԻՄԱԳՐԱԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երաշտին պատճառով ստեղծուած սովի վտանգը հակակռելու համար Հայաստանի դիմումներ կատարած էր արեւմտեան երկիրներուն: Օժանդակող երկիրներէն առաջինը եղած է Ֆրանսա, որ վերջերս Հայաստան ուղարկած է վեց հազար թոն ալիւր:

Ռուսական Տուժարի անդամ Վլադիմիր Սերչենչօ յայտնած է, թէ Ռուսիա այս տարի եւս ցորեն պիտի տրամադրէ Հայաստանի, Վրաստանի եւ Ազրայճանի:

Հայաստանի գիւղատնտեսութեան նախարար Զաւէն Գէորգեան յայտնած է, որ քառասուն միլիոն տոյարի վնաս պատճառած երաշտը ամէնէն աւելի հարուածած է երկրի աղքատացած շրջանները: Ան նաեւ յայտնած է, թէ մինչեւ յառաջիկայ ամառ ՄԱԿի կողմէ պիտի տրամադրուի տասը միլիոն տոյարի օժանդակութիւն: Այսպիսով Հայաստանի կառավարութիւնը հիմք կ'ունենայ յայտարարելու, թէ երկրին մէջ սովի վտանգ գոյութիւն չունի:

ՉՈՐՍ ԾՈՎԱԳԻՒԴՑԻՆԵՐ ԿԸ ՄԱՀԱՆԱՆ ԱՆՅԱՅՑ ՊԱՅՄԱՆ ՆԵՐՈՒ ՄԷՋ

2 Դեկտեմբերին գիւղեր Սեւանայ լիճին մէջ խեղդուած են ծովագիւղցի երեք երիտասարդներ, որոնցմէ երկուքը եղբայրներ են, իսկ միւսը՝ անոնց փեսան: Փնտուտընեթէ ետք յայտնաբերուած են երկու դիակներ, իսկ երրորդը անյայտ կը մնայ:

Այս ողբերգութիւնը տեղի չէր ունենար, եթէ ծովագիւղցի երիտասարդները նկատի ունենային «Սեւանայ լիճին մէջ արտօնագրային ձկնորսութեան դադարեցման մասին» որոշումը եւ կէս գիւղերով չնաւարկէին լիճին վրայ:

Յաջորդ օրը Ծովագիւղի մէջ 78ամեայ Անուշաւան Գրիգորեան դարձած է իր ձեռքով խնամած ցուլին զոհ: Դէպքը պատահած է Սեւան քաղաքի մայրուղիին վրայ, «Ալթամար» արձանին մօտերը:

Ըստ աղանատեսներուն, ցուլը անյայտ պատճառներով կատուած է յորձակած է զրօսաշրջութեան կեդրոնի մը շրջակայքը գտնուող մարդոց վրայ: Ցուլին տէրը փորձած է զսպել անստույն, սակայն վերջինս եղջիւրը մեծ թափով խրած է ծերունիին կողորդը. ծերունին տեղուցի վրայ մահացած է:

ԳԻՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՏԱՐԱԾՔ ԿԸ ՅԱՏԿԱՑՆԷ «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ»

Գիւմրիի քաղաքապետարանը 6 հեկտար տարածք յատկացուած է 1988 թուականի երկրաշարժի զոհներուն եւ Հայաստանին համար յիշ ծանր օրերուն օգնութիւն ցուցաբերած մարդոց յիշատակին կառուցուելիք «Երախտագիտութեան տաճար»ին:

Առաջմ անոր տեղը յատակ չէ, որովհետեւ քաղաքը մինչեւ օրս չունի գլխաւոր յատակաքիւծ, ըստ համառուն կազմակերպութեան նախագահ Խաչիկ Գրիգորեան:

Այս թանգարանը, ըստ նախագիծին, պիտի ունենայ 6 բաժին, ուր պիտի ներկայացուին նիւթեր եւ լուսանկարներ՝ երկրաշարժի զոհներուն, փլատակներուն եւ աշխարհի մէջ տեղի ունեցած աղէտներուն մասին:

Թանգարանին մէջ պիտի ցուցադրուին նաեւ քարտէսները, դրօշակներն ու զինանշանները այն երկիրներուն, որոնք օժանդակեցին Հայ փոլովորդին: 200 հոգինոց զանգուտ պիտի ծառայէ աշխարհի փոլովորդներուն պատմական եւ մշակութային արժէքներուն վերաբերող վաւերագրական ժապետներու ցուցադրելու եւ ձեռնարկներ կազմակերպելու նպատակով:

7 Դեկտեմբեր 1988ի երկրաշարժէն ետք Հայաստանին օգնեցին աշխարհի 128 երկիրներ, 8 միջազգային կազմակերպութիւններ եւ միլիոնաւոր մարդիկ:

ԼՈՒՐԵՐ ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆԷՆ

ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ
ՏՕՐԱԿԱՍՏՐՈՒԹԻՒՆ ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆԻ ՄԷՋ
Չորեքշաբթի, 22 Նոյեմբերի առաւօտեան ժամը 10:00ին Լիբանանի անկախութեան տօնին առիթով, հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Թոչնոց Բոյնի շրջափակին մէջ՝ ներկայութեամբ ձիպէյի քաղաքապետարանի ներկայացուցիչ տոքթ. Յակոբ Կարապետեանի եւ այլ հիւրերու:

Նախքան հանդիսութեան սկսիլը՝ Թոչնոց Բոյնի աշակերտները տողանցեցին շրջափակին մէջ, ապա իրենց մասնակցութիւնը բերին արաբերէն լեզուով՝ բանաստեղծով, արտասանելով եւ երգելով, ինչ որ մեծ տպաւորութիւն ձգեց ներկայներուն վրայ:

Այս առիթով խօսք առին քոյր Եւրոպիկ Պոյաձեան, ձիպէյի քաղաքապետարանի ներկայացուցիչ տոքթ. Յակոբ Կարապետեան, իսկ փակման խօսքը կատարեց Թոչնոց Բոյնի տնօրէն Տ. Մեդրիկ վրդ. Բարիքեան:

Յետմիջօրէին աշակերտները այցելեցին ձիպէյի պատմական վայրերը:

ՄԵԾՐԱՆՔԻ, ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՍՏԱՆԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒՐՈՒԱԾ ԲՈՅՆԻ ԲԱՐԵՐԱՆՆԵՐՈՒՆ

Շաբաթ, 25 Նոյեմբեր 2000ին, Մոսկու թատերաարահին մէջ տեղի ունեցաւ երախտագիտական երեկոյ մը՝ կազմակերպութեամբ Թոչնոց Բոյնի խնամակալութեան: Ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, կիրակոսոյց վարժարաններու վարիչ տնօրէն՝ Մաշտոց վրդ. Չոպանեան, նախարար՝ Սեպուհ Յովնանեան, երեսփոխաններ Ժորժ Գասարճի, Ժան Օղասապեան, Ապաստ Հաշմէ, ձիպէյի նահանգապետի ներկայացուցիչը, նախկին երեսփոխան Խաչիկ Նարեգտոնի, ձիպէյի փոխ քաղաքապետը եւ քաղաքապետութեան անդամներ, ձիպէյի Մշակութային կեդրոնի վարչութեան պատասխանատու տնօրէն՝ Միշէլ Սաքր, Պուրճ համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիկեան, մեծ թիւով բարերարներ եւ հոծ բազմութիւն մը:

Խօսք առաւ Թոչնոց Բոյնի տնօրէն՝ Մեդրիկ վրդ. Բարիքեան, որ իր երախտագիտութիւնը փոխանցեց ներկայներուն՝ յանուն Թոչնոց Բոյնի տնօրէնութեան, խնամակալութեան, տիկնայ յանձնախումբին, ուսուցչական կազմին, Գայիանեաց միաբանութեան քոյրերուն եւ աշակերտներուն: Դրուատիքով արտայայտուեցաւ անոնց ցուցաբերած վեհ ու պղնձի վերաբերմունքին՝ Թոչնոց Բոյնի մեծ ընտանիքին եւ յատկապէս երեսփոխանին նկատմամբ, որոնց համար Թոչնոց Բոյնը պատրաստ է ուսումնարան է:

Իր կարգին, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան իր փակման խօսքին մէջ շեշտը դրաւ Մեծարանք, Երախտագիտութիւն եւ Գնահատանք բարեոյն վրայ: Ընտրիւորեց Թոչնոց Բոյնի տնօրէնութիւնն ու խնամակալութիւնը այս գեղեցիկ մտայնացումին համար, ինչպէս նաեւ շնորհաւորեց ներկայները՝ մաղթելով քաջառողջութիւն եւ յարաբարութիւն:

Հանդիսութեան ընթացքին ելոյթ ունեցաւ համազգային «Քնար» պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց Ֆելիքս Յարութիւնեանի:

ԹՎԹԱԿԻՑ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

30 Նոյեմբերին Պոլսոյ մէջ նշուեցաւ Յունաց Տիեզերական պատրիարքութեան հիմնադրութեան տարեդարձը: Այս առիթով Արամ Ա. կաթողիկոս հրաւեր մը ստացած ըլլալով Բարթողիմէոս պատրիարքէն՝ Նարեկ Ծ. վրդ. Ալեքանդրեան Պոլիս դրկեց պաշտօնապէս զինք ներկայացնելու համար:

Վերջինս վեհափառին անունով շնորհաւորեց Տիեզերական պատրիարքը եւ յիշատակի նուէր մը փոխանցեց անոր: Հայր սուրբը այս առիթով հանդիպեցաւ Պոլիս գտնուող միջկեղեցական

Միջազգային Քաղաքական



Սերկեյ քայլ պիտի պահե՞՞ Փորթինի հետ

ՌՈՒՄԻՈՅ ԲԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄ

ԿՈՐԻՉԱՅԻՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՉԵՒ ԲԱՆԱԿԵՃ

անգամ քննարկած է րանակին վիճակը, որ տակալին կը դիմազարաւէ ֆինանսական դժուարութիւնները եւ պատերազմ մղելու իր նպատակները

Ռուսիոյ բանակին թիւը կրճատելու մասին նախագահ Վլադիմիր Փութինի որոշումը տարակարծութեան պատճառ դարձած է ուսու հրամանատարութեան շարքերուն մէջ, որուն մէջ մասը յարմար կը նկատէ շարունակել յենի կորիզային գէնքերու վրայ, իսկ միւս հատուածը կը պնդէ, որ բանակը պէտք է ուղղուի դէպի արդիականացում, աւանդական զինեալ ուժերու:

Նախագահ Փութին ցարդ յառաջ կը մղէ զգուշացումը եւ միջին տարբերակ մը, որուն համաձայն, պիտի կրճատուին թէ՛ կորիզային գէնքերը եւ թէ՛ աւանդական զօրքերը: Սակայն ան տակալին պիտի լուծէ բանակին մէջ գոյութիւն ունեցող այն տարակարծութիւնը, թէ յետ խորհրդային Ռուսիան ինչպէս պիտի պաշտպանէ ինքզինքն եւ ինչ տեսակի վտանգներու դէմ:

Անցեալ ամիս ուսու զօրավարներու եւ ծովակալներու հետ հանդիպումի մը ընթացքին նախագահ Փութին ըսաւ, որ՝ «մենք կը շարունակենք քննարկումները եւ կ'ունենանք հանդիպումներ, մինչդեռ բարեկարգումներու անիւր դանդաղօրէն կը դառնայ»:

Վերջին ամիսներուն Ռուսիոյ Ապահովութեան խորհուրդը երկու

ճշդուած են տակալին խորհրդային Միութեան փլուզումէն առաջ: Յաջորդ նիստը նախատեսուած է յառաջիկայ ամսուան ընթացքին: Սակայն յստակ չէ, թէ նախագահ Փութին որքան հեռու պիտի երթայ այս հարցին մէջ, որ վերածուած է խորհրդային ժամանակներէն ժառանգուած ամէնէն վիճելի հարցին:

խորհրդային բանակին անկումը սկսաւ Միխայիլ Գորբաչովի ժամանակաշրջանին: Այդ բանակը գերուժ էր իր չափով եւ ծանր բեռ՝ երկրի տնտեսութեան վրայ:

Հարցին վառարարացման առաջըր առնելու համար նախագահ Պորիս Ելցին գրեթէ ոչինչ ըրաւ: Ան նոյնիսկ չեւէն անջատողականներուն դէմ առաջին պատերազմին (1994-1996) զինուորական նահանջ արձանագրեց: Նախագահ Ելցին իր պաշտօնավարութեան ընթացքին համաձայնած էր զօրավարներուն հետ, որ զինուորական հարցերուն մէջ միջամտելու պիտի չըլլայ, մինչեւ այն ատեն որ այս վերջինները զօրավիզ կը կանգնին իրեն:

«Փութին կարգ մը դրական միտումներ ցոյց տուած է, եւ այն իրողութիւնը, որ ան սկսած է շարժիլ, դրական է: Ելցին նոյնիսկ ձեռնարկեց առկա ընելու», ֆրանսէ Ալեքսանտր Փիթայեւ Մոսկուայի մէջ Գործակի կեդրոնի պաշտպանութեան եւ գէնքե-

րու հսկողութեան մասնագէտ մը: «Դրական այլ կէտ մըն է, նաեւ այն, որ ան ցոյց տուած է, թէ ինք պատրաստ է զիջումներ կատարելու: Սակայն ասիկա նաեւ իր տկար կողմն է, որովհետեւ ան կ'ուզէ խուսափիլ կարեւոր որոշումներ կայացնելէ, որոնք բացարձակապէս կենսական են», կ'ըսէ Փիթայեւ:

12 Օգոստոսին ուսուական ամէնէն արդիական սուզանակներէն Բուրսքի ադէտէն ետք Փութին զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներէն ոչ մէկը պաշտօնազրկեց: «Փութին գերազանց առիթ ունէր ըլլալը պաշտօնազրկելու եւ իր մարդիկը նշանակելու՝ սկսելու համար բարեկարգումները, սակայն ան չկրցաւ ատիկա ընել», կ'ըսէ Փիթայեւ: «Ան թերեւս նոյնքան անվճռական է, որքան՝ Գորբաչովն ու Ելցինը: Անոր կարելիութիւններու պատահանը կրնայ գոցելի, ուշ թէ կանուխ անիկա պիտի գոցուի», կ'ըսէ ան:

Նախագահ Փութին իշխանութեան հասաւ վարչապետի պաշտօնը վարած չըլլանիս չեղէն անջատողականներու դէմ իր սկսած զինուորական արշաւին շնորհիւ: Ընդհանրապէս այն համոզումը գոյութիւն ունէր, որ իրրեւ Բա.Կէ.Պէ.ի վիճարան՝ Փութին զօրաւոր զինուորական եւ ապահովական համակարգի վրայ ազդեցութիւն բանեցնելու համար:

Այսուհանդերձ չեղէն ըմբոստներու դէմ զինուորական երկրորդ արշաւին ձեռնարկելէն ի վեր Փութին հարուած մը կը ստանայ իր բարձրաստիճան զինուորականներուն միջեւ անհամա-

ձայնութիւններէն: Զինուորական հարցերը աւելի խորացան «Բուրսք»ի ադէտին պատճառով, որուն հետեւեցաւ դէպքին մասին բանակին եւ կրեմլինին ապստեղեկատուութիւնը: Թէեւ Ռուսիոյ զինուորական պիւտեճէն (7,5 միլիառ տոլար) վերջերս կրցած է գումարներ հայթայթել քարիւղի միջազգային սակագիներու բարձրացման իրրեւ արդիւնք, սակայն բանակը տակալին, նիւթական դժուարութիւններ կը դիմադրուէ: Նախագահ Փութին ընտրանքը աւելի փոքր բանակ մը ստեղծելն է, սակայն հարցը այն է, թէ ինչպէ՞ս պէտք է հասնիլ այդ նպատակին:

Քարեկի կեդրոնի փոխ տնօրէն Տմիթրի Թրենինի ուսումնասիրութեան համաձայն, մինչ Ռուսիոյ ըստական համեմատաբար մեծ է, անոնց զինուորական կազմածները մեծամասնութեամբ հինցած են, զինուորական ենթակառուցները նախնական են եւ զինուորները ատակ չեն:

Բանակը դժուարութիւն ունի Չեչենիոյ պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ 100 - 120 հազար զինուորներու զօրահաւաքը կազմակերպելու: «Սպաները աւելի շատ են զինուորներէն, եւ նոյնքան գնդապետ կայ, որքան՝ կրտսեր սպայ», կ'ըսէ ան: «Հետեւողական մարտական մարզումներու բացակայութեան պատճառով գոյութիւն ունի հրամանատարներու ամբողջ սերունդ մը, որ երբեք չէ մասնակցած ռազմափորձերու», կը նշէ ան: Թրենինի ուսումնասիրութեան համաձայն, բանակին ռազմական սկզբունքները ճշդուած են խորհրդային շրջանին. անոնք կը նե-

րառեն միջոցառումներ՝ ՕԹԱՆի յարձակումներուն դէմ զնելու եւ կամ հարաւէն եկած սպառնալիքները դիմադրուելու: «Աւելի արմատական եւ հիմնական բարեկարգումներ պէտք են, որպէսզի այս տագնապը իրապէս լուծուի: Ռուսիոյ ղեկավարութիւնը ներկայիս կը փորձէ մեղմացնել զայն», կ'ըսէ Թրենին: «Ռուսական բանակը մտահոգող սկզբունքային հարցը ոչ թէ նշուած նիւթական աղբիւրներու պակասն է, այլ՝ զինուորական պահանջներուն չափազանցութիւնը», կը նշէ Թրենին:

Ռուսիոյ բանակին ղեկավարութիւնը տարակարծիք է բանակի թիւի կրճատումներուն վերաբերեալ:

Պաշտպանութեան նախարար մարաշախտ Իկոր Սերկեյեւի գլխաւորած խմբակը կը նշէ, որ Ռուսիա պէտք է շարունակէ յենի իր կորիզային գէնքերուն կարողականութեան վրայ, որովհետեւ աւանդական ուժերը բաւական տկար են:

Միւս խումբը, սպայակոյտի պետ զօրավար Անատոլի Բովաշնինի գլխաւորութեամբ, կը պնդէ, որ կորիզային գէնքերուն քանակը կրնայ արմատականօրէն պակսիլ, հետեւաբար Ռուսիա պէտք ունի արդիականացած աւանդական բանակի մը, որ կարողութիւնը ունենայ Եւրոկոսմոսիոյ դէմ ՕԹԱՆի կողմէ կատարուած օդային յարձակումի մը նմանօրինակ գործողութեան դէմ զնելու:

«ԻՆԹԵՐՆԵՇՆԵԼ ԷՆԵՐԸՏ ԹՐԻԳՐԱՌՆ»

ՑԱՄԱԲԱՅԻՆ ՀՐԵՏԱՆԻՒԻ ԱՊԱԳԱՆ

Այսօր ռազմագիտութեան մէջ գլխաւոր մրցակցութիւնը սերի կ'ունենայ օդուժի եւ ցամաքային հրետանիի ճարտարաբաններուն միջեւ:

Ռազմական սարքերու ազդու ըլլալը առաւելաբար կախեալ է անոնց պաշտպանութեան ձեւերէն, դիւրաշարժութենէն եւ հզօրութենէն: Այսօր շատեր կը պնդեն, որ դիւրաշարժութեան եւ հզօրութեան առումով ամէնէն ազդեցիկը օդուժն է, եւ, հետեւաբար, չարժեք ցամաքային հրետանին ռազմաճակատ ուղարկելով աւելորդ զոհեր տալ:

Վերջին տարիներուն Արեւմուտքը աւելի վերապահ կեցածք էր դրոյնքի, երբ հարցը կը վերաբերի զինուորներու կենսաքի վտանգումին, յատկապէս՝ երբ մղուող պատերազմը ազգային գոյատեւման ի խնդիր չէ: Հետեւաբար զոհերու թիւին նուազեցումը եւ արհեստագիտութեան առաւելագոյն օգտագործումը դարձած են ռազմական սկզբունք: Սակայն այս մէկը կը յարուցէ բարոյական այլ հարցեր, անցեալ տարի 11 օր շարունակ Սերպիոյ ուժերի դիմացին ընթացքին, թէեւ քաղաքային զոհերը յարաբերաբար քիչ էին, սակայն կարելի չեղաւ թիւը նուազագոյնի իջեցնել, որովհետեւ Արեւմուտքի ռազմագէտները կը պնդէին, թէ բարձրէն թռիչք կատարելը կենսական է հակաօդային գէնքերէն խուսափելու համար: Սակայն այսօրուան քաղաքական մտածողութիւնը, որ այնքան ալ ուղղորդութիւն չի դարձնել անձնագոհութեան եւ քաղցրութեան նման «հնամենի» առաքինութիւններու, կը նախընտրէ յաւելել ճշգրտութեամբ «հեռուէն» տեսնող եւ հարուածող» գիտական կուլտուրան: Ահա այս տեսութեան շատագոյններն են, որ մարտահրաւրակ կ'ուղղեն ցամաքային

հրետանիի թէզը պաշտպանողներուն:

Սանտալոթի մէջ բրիտանական Սպայից վարժարանին ուսումնական ծրագիրը շեշտը կը դնէ խմբային աշխատանքի, դեկավորութեան ոգիի, կամքի եւ անձնագոհութեան նման առաքինութիւններու վրայ: Սակայն արդեօք անցեալէն ժառանգուած առաքինութիւնները եւ գէնքի տեսակները պիտի կրնան քայլ պահել յառաջընթացին հետ:

Ամէն պարագայի, թնդանօթներ, հրասայլեր եւ զրահապատ փոխադրականներ բազմամիլիառ տոլարներ արժող տնտեսութիւն մը կը ներկայացնեն, որքան ալ վիճելի ըլլալ անոնց կարեւորութիւնը:

Անցեալ ամիս տարբեր երկիրներէ հասած ցամաքային զինուորական սարքերու հսկայական եւ տպաւորիչ հաւաքածոյ մը ցուցադրուեցաւ Յունաստանի Փիրէա նաւահանգիստին մէջ: Հոն էին ամերիկացիները, նախապէս Երեւանի մէջ մրցակիցը՝ Թուրքիա, պիտի ստորագրէ աւելի մեծագումար համաձայնագիր մը՝ գնելով 1000 հրասայլ: Այս վերջին պարագային, հաւանական վաճառողներ կրնան ըլլալ ամերիկեան, ֆրանսական, գերմանական եւ ուլթրանական գործարաններ: Սակայն մէկ բան յստակ է՝ Յունաստանին վաճառողին հետ թուրքիա վստահօրէն պիտի մերժէ գործակցիլ: Որքան ալ մեծ հետաքրքրութիւն ստեղծուի այս վաճառքներուն շուրջ, յստակ է, որ ցամաքային հրետանիի ճարտարաբանները կ'ապրի վճռական պահեր: Օրինակի համար ՕԹԱՆի բանակը հաւանաբար քանի մը տասնամեակ եւս շարունակէ այս «մետաղեայ հրէշ»ներու

օգտագործումը, սակայն զանոնք արդիականացնելու ուղղութեամբ մեծ ճիգեր չեն թափուիր:

Հակառակ վերոյիշեալ տարբերութիւններուն, այս հրասայլերը ունին հասարակացութեան զինուորներ, բոլորն ալ կը կշռեն շուրջ 70 թոն, կրնան ճգմել իրենց ճամբուն վրայ գտնուող որեւէ բան, սակայն, եթէ հետեւակներու կողմէ չպաշտպանուին, յանդուզն հակառակորդ մը կրնայ մօտենալ եւ ականահարել զայն:

Սակայն հրասայլերու վաճառող խոցելի կէտը անոնց փոխադրութեան դժուարութիւնն է:

Ամերիկեան օդուժը ունի շուրջ 50 «Ալ-17» օդանաւեր, որոնցմէ իւրաքանչիւրը կրնայ մէկ հրասայլ փոխադրել: Աւելի հին տարբերակ մը՝ «Ալ-17»-ը, նուազ վստահելի է եւ կարիք ունի աւելի երկար վազքուղի: Միւս կողմէ, սակայն, եւրոպական ու մէկ երկրի ունի հրասայլերու փոխադրութեան յարմար օդանաւեր:

Գերմանացի ռազմագէտներ կրնան պնդել, թէ իրենց հրասայլերը միշտ ալ կրնան երկաթուղով տեղ հասնիլ, սակայն հարկ է դիտել ալ, որ երբ ՕԹԱՆ Բոսնիոյ մէջ ծանր հրետանի պիտի տեղադրէր, պարզուեցաւ, որ երկաթուղիներու փապուղիները նեղ էին եւ անոնց մէջէն հրասայլերու անցքը կարելի չէր: ՕԹԱՆ ստիպուեցաւ ծովային ճամբով կատարել փոխադրութիւնը:

Միացեալ Նահանգները, որոնք ռազմական ուսումնասիրութիւններու համար աւելի կը ծախսեն, քան իրենց եւրոպացի բոլոր դաշնակիցները

միասին, կրնան աւանդական, ինչպէս նաեւ նոր գէնքերու շինութեան պերճանքը իրենք իրենց թոյլատրել, սակայն Եւրոպայի շատ աւելի փոքր բանակներուն համար հին ու նոր գէնքերու միջեւ ընտրութիւն կատարելը առանցքային կարեւորութիւն ունի:

Այստեղ, արդար ըլլալու համար, պէտք է ըսել, որ «ցամաքային» համակարգեր կոչուող գէնքերը նոյնպէս կ'արդիականացուին եւ կը դառնան աւելի «խելացի»: Ամերիկայի եւ Գերմանիոյ մէջ այսօր կը պատրաստուին արահայտներով ղեկավարուող հրասայլեր: Կը խօսուի նաեւ ելեկտրականութեամբ բանող զրահապատներու կառուցման մասին, որ հրասայլերը պիտի ձեռնարկուէր քարիւղի պահեստներէն՝ զանոնք դարձնելով աւելի փոքր եւ աւելի թեթեւ: Հրասայլերու յաջորդ սերունդը պիտի վստահի ի վրայ գէնքերու վրայ: Նման գէնքերու դէմ հրասայլերը զրահապատելու անկարելի է եւ, հետեւաբար, շեշտը պիտի դրուի արագ շարժող եւ արագ հակադարձող մեքենաներու վրայ:

Մինչ Բրիտանիա եւ Ֆրանսիոյ (Քաղուածաբար)

«ՏԻ ԷՔՆՈՒՍՏՍ»

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Թոյր ամօք, որոնք կը փափաքին Ազգային մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է քննարկել խմբագրատունի ծանուցումներու քաղաքական հասցեն հրատարակման թուականը առնուազմ օր մը առաջ, Մեծ Երկրի ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱԳ 5:


«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

«ԱՉՂԱԿ»-Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿԱՄԱՐ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՀՈԼԱՆՏԱ ՖԻՖԱԻՆ ԿՈՂՄԷ ԸՆՏՐՈՒԵՑԱԻ 2000Ի ԼԱԻԱԳՈՅՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Ժրնեի մէջ (Չուիցերիա) իր գումարած ծողո՞վէն ետք, երէկ ՖԻՖԱՆ յայտարարեց, թէ 2000 տարուան լաւագոյն ֆուտպոլի ազգային խումբը ընտրուած է Հոլանտան:

Հակառակ անոր, որ Հոլանտա Եւրո-2000ի ֆուտպոլի մրցաշարքին կիսաւարտականին դուրս մնացած էր մրցաշարքէն, փենայթիներով պարտուելէ ետք Իտալիայէն, սակայն 2000 տարուան ընթացքին անոր ներկայացումները պատճառ դարձած էին, որ արժանանայ տիտղոսին, այսպիսով գերազանցելով Հոլանտա:

Իր այդ կրած պարտութենէն բացի, Հոլանտա իր կատարած 14 մրցումներուն (այս տարի) կրած էր մէկ այլ պարտութիւն մը, անցեալ Հոլանտեմբերին, Փորթուգալիէն (2002ի Մոնտիալի պտույմ):

Նշենք, թէ 1994էն 1999 տարիներուն տարուան լաւագոյն խումբին տիտղոսին կը տիրանար Պրաչի:

Նիկերիա ընտրուեցաւ 2000 տարուան լաւագոյն ուսումնարան արձանագրող խումբը, նկատի ունենալով, որ անկիւ 30 դիրք բարձրացած էր այս տարուան ընթացքին:

Ստորեւ՝ ցամաքամասերուն պարագլուխի դիրքերը գրաւող կազմերը.

- ԱՍԻԱ - Ճապոն
- ՀԱՐԱԻՍՅԱՆ ԱՍԵՐԻԿԱ - Քոլումպիա
- ԱՓՐԻԿԷ - Նիկերիա
- ՔՈՆՔԱՍՏԱՆ - Հոնոլուլու
- ՈՎԿԻՍՆԻԱ - Աւստրալիա
- ԵՒՐՈՊԱ - Հոլանտա

● ԱՆԳԼԻԱԿԱՆ «Ուրլյա Սաքըր» մարզաբերթը երէկ տարուան լաւագոյն ֆուտպոլիստը ընտրեց փորձուալիցի միջնապահ Լուիս Ֆիլոն: Ֆիլոն, որ ամբարն ընթացքին Պարսելոնայէն Ռեալ Մատրիտի փոխանցուած էր, փոխան 53 միլիոն տոլարով, մարզաբերթին ընթերցողներուն կողմէ ստացաւ 26 առ հարիւր:

Եովէնթուսի միջնապահ Չիւստին Չիտան հանդիսացաւ երկրորդ, իսկ Ա. Սէ. Միլանի յառաջապահ Անտոնի Ծեվէնքո՝ երրորդ:

Իտալիոյ ֆուտպոլի ազգային խումբին նախկին մարզիչ Տիւս Զոֆ տիրացաւ տարուան լաւագոյն մարզիկի տիտղոսին, իսկ տարուան լաւագոյն խումբը ընտրուեցաւ աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Ֆրանսան:

Նշենք, թէ յառաջիկայ շաբաթ Հոնոլու մէջ ՖԻՖԱՆ կողմէ պիտի ընտրուի տարուան լաւագոյն ֆուտպոլիստը. ցանկին վրայ կը գտնուին Լուիս Ֆիլոյի, Չիւստին Չիտանի եւ Ռիվալտոյի անունները:

ՊՈՒՆՏՍՆԻԿԱ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ

16ԲԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պոնտս-լիկա) 16րդ եւ երկրորդ նախափուլին հանգրուանի մրցումներուն, այսօր Անթրախթ Ֆրանքֆորթ կը հիւրընկալէ Վոլֆսպուրկը: Վաղը տեղի կ'ունենան հինգ ճակատումներ, իսկ Կիրակի օր՝ երեք:

Վոլֆսպուրկ, որ ունի բացակայ մարզիկներ, որոնց կարգին նիճերիացի Եոնաթըն Աքֆոպորի (կախակալուած), պիտի փորձէ նեղ կացութեան չմտնուել Ֆրանքֆորթի դաշտին վրայ տեղի ունենալիք մրցումին, մասնաւորապէս որ հիւրընկալ կազմն ալ ունի բացականեր:

16րդ հանգրուանի զագաթի ճակատումը սակայն տեղի պիտի ունենայ Կիրակի օր, ուր պարագլուխի դիրքը գրաւող Հերթա Պերլին հիւրը պիտի ըլլայ Պայէր Լեւերքուզընի (2րդ), որ իր ունեցած տկար կուլտուրային պատճառով միայն ետ կը մնայ անկէ:

Պարագլուխի դիրքը գրաւելու համար Լեւերքուզըն անպայման յաղթանակի պէտք ունի, սակայն անկիւ ունի բացակայ մարզիկներ: Միջալէլ Պայթը վերաւոր է, իսկ պարագլուխի Ռոպպըն Փոնթէ՝ կախակալուած:

Վերջին չորս տարիներուն երեք անգամ փոխ ախոյեան հանդիսացած Լեւերքուզըն այս եղանակին ալ կը պայթարի տիտղոսին համար:

Հերթա Պերլին վերջին անգամ Լեւերքուզընի դաշտէն յաղթական վերադարձած է 1997-98 եղանակին (1-0):

Անցեալ եղանակի ախոյեան Պայէրն Միլնիլի (4րդ) հիւրը պիտի ըլլայ Բայեր Նոյմարտի Գրոնի (7րդ), իսկ Պորուսիա Տորթմունտ (5րդ) իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Ունիթրաֆտինգը (14րդ):

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն յայտարարուած:

- ԱՅՍՕՐ
- Անթրախթ Ֆրանքֆորթ - Վոլֆսպուրկ
- ՎԱՂԸ
- 1860 Միլնիլի - Հանպո Ռոսթըր
- Ֆրայպուրկ - Պոլիստ
- Շալքէ - Շթուրպարթ
- Պորուսիա Տորթմունտ - Ունթրիախիմ
- Քայլերպարտուրըն - Պայէրն Միլնիլի
- ԿԻՐԱԿ
- Պայէր Լեւերքուզըն - Հերթա Պերլին
- Վերտըր Պրեմըն - Քէօլն
- Համպուրկ - Քոթայուս

ՊԱՍՔԵԹՊՈԼ. ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԿՈԼՏԸՆ ՍՈՒՅԹ ՈՒՈՐԻՇՐԶ - ԼՈՍ ԱՆՃԵԼՍ ԼԵՅԸՐԸ՝ 125-122

Էն. Պի. Էյ. Ի երէկուան մրցումներուն, հետաքրքրական եւ տաք ճակատումէ մը ետք վերջ գտաւ Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ - Լոս Անճելըս Լէյքըրզ մրցումը, ի նպաստ առաջինին, որ յետ երկարաձգման 125-122 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը: Սակայն հակառակ այդ պարտութեան, Լէյքըրզ Ուորիըրզի դէմ իր կատարած 21 մրցումներուն կրած է միայն չորս պարտութիւն:

Երէկուան մրցումին, Ուորիըրզի մարզիկ Ճէմիսըն յաջողաբար երկրորդ մրցումն ըլլալով նշանակեց 51 կէտ: Իր կարգին, Քոպէ Պրայընթ (Լէյքըրզ) նշանակեց 51 կէտ (իր ասպարէզին ընթացքին առաւելագոյն նշանակած կէտերը), սակայն անոր կազմը կրեց իր 6րդ պարտութիւնը: Նիւ Եորք Նիքս պարտութիւն մը կրեց Տալաս Մալքըրիքսէն, 94-85 արդիւնքով: Մալքըրիքսի մարզիչ Տոն Նելսըն իր ասպարէզին ընթացքին յաջողեցաւ իր 938րդ յաղթանակը արձանագրել:

Յարդ միայն երկու յաղթանակ արձանագրած Շիքսօ Պիլլի շարունակեց իր ձախողութիւններու շարքը եւ կրեց իր 16րդ պարտութիւնը, իր հիւրէն՝ Քլիվլէնտ Քալաիթըրզին, 92-88 արդիւնքով: Հակառակ իր կազմին կրած պարտութեան, Ռոն Մերսըր նշանակեց 34 կէտ: Անտրէ Միլըր (Քլիվլէնտ) նշանակեց 19 կէտ:

Նիւ Ճըրզի Նէթս 109-87 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր դաշտին վրայ, իր հիւրէն՝ Միլուոքի Պարսէն: Յարթական կազմին մարզիկներ Ռեյ Էլլըն եւ Կլէն Ռոպինսըն յաջողաբար նշանակեցին 30 եւ 27 կէտ:

Միլուոքի Նէթս 109-87 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր դաշտին վրայ, իր հիւրէն՝ Միլուոքի Պարսէն: Յարթական կազմին մարզիկներ Ռեյ Էլլըն եւ Կլէն Ռոպինսըն յաջողաբար նշանակեցին 30 եւ 27 կէտ:

Ֆիլատելֆիա Սիթըրզ, որ Էն. Պի. Էյ. Ի մրցումներուն ցարդ լաւագոյն արդիւնքը արձանագրած է (14 յաղթանակ եւ 4 պարտութիւն), յայտնեց, թէ Էրիք Մնո, որ երկու օր առաջ վիրաւորուեցաւ (աջ ծունկէն), վեցէն ուր շաբաթ պիտի չկարենայ դաշտ ներկայանալ, ինչ որ կրնայ իր վատ անդրադարձը ունենալ Սիթըրզի արձանագրելիք արդիւնքներուն վրայ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- Լոս Անճելըս Քլիվլէրզ - Ուաշինկթըն Ուիզարտ 93-88
- Շարլոթ Հորնէթս - Ինտիանա Փէյլըրզ 91-88
- Մայեմի Հիթ - Տենսըր Նակթը 95-78
- Միլուոքի Պարս - Նիւ Ճըրզի Նէթս 109-87
- Քլիվլէնտ Քալաիթըրզ - Շիքսօ Պոլլ 92-88
- Տալաս Մալքըրիքս - Նիւ Եորք Նիքս 94-85
- Փորթլէնտ Թրէյլ Պլէյլըրզ - Սիթըրզ Սուփըրսոնիքս 112-99
- Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ - Լոս Անճելըս Լէյքըրզ 125-122



Սիթըրզի աստղերէն Էրիք Մնո (թիւ 20), որ վեցէն ուր շաբաթ պիտի բացակայի դաշտերէն:

Ստորեւ՝ գասաւորումը.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ

● (ԱՍԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ)	Յաղթ.	Պարտ.
1. Ֆիլատելֆիա Սիթըրզ	14	4
2. Նիւ Եորք Նիքս	12	8
3. Մայեմի Հիթ	9	10
4. Պորթլէնտ Սթէյթ	8	10
5. Օրլանտո Մէճիք	8	11
6. Նիւ Ճըրզի Նէթս	6	13
7. Ուաշինկթըն Ուիզարտ	4	15

● (ՅԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)

1. Քլիվլէնտ Քալաիթըրզ	11	7
2. Շարլոթ Հորնէթս	12	8
3. Թորոնթօ Ռեքթըրզ	9	9
4. Տիքսոնիք Փարսընզ	9	10
5. Ինտիանա Փէյլըրզ	8	10
6. Միլուոքի Պարս	8	10
7. Արլանտա Հորս	4	14
8. Շիքսօ Պոլլ	2	16

ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

● (ՄԻՉՍԵՒՄՏԵԱՆ ԳՕՏԻ)

1. Եոթա Ճէյ	14	4
2. Սան Անթոնիօ Սփըրզ	11	6
3. Տալաս Մալքըրիքս	12	8
4. Հիւսթըն Ռեքթըրզ	10	8
5. Միսսուրի Վոլվը	10	8
6. Տենսըր Նակթը	10	9
7. Վանքուվըր Կրիպիթ	7	11

● (ԽՍՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ)

1. Սաքրամենթօ Բիլիզ	12	4
2. Լոս Անճելըս Լէյքըրզ	14	6
3. Տէօնիքս Սանկ	11	5
4. Փորթլէնտ Թրէյլ Պլէյլըրզ	13	7
5. Սիթըրզ Սուփըրսոնիքս	9	11
6. Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ	6	13
7. Լոս Անճելըս Քլիվլէրզ	6	14

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտարարուած:

- Տենսըր Նակթը - Օրլանտո Մէճիք
- Տէօնիքս Սանկ - Միլուոքի Պարս
- Ուաշինկթըն Ուիզարտ - Միսսուրի Վոլվը
- Նիւ Եորք Նիքս - Սան Անթոնիօ Սփըրզ
- Վանքուվըր Կրիպիթ - Եոթա Ճէյ

ԵՆ. Է. ԷՅ. Ա. Ի ՄՐՅԱՍՏՐԸ

ԱԷՔ ԱԹԵՆՔ ԴՈՒՐՍ 2ԳԵՅ ՊԱՅԵՐ ԼԵԻԵՐՔՈՒՉԸՆԸ

Եո. Է. ԷՅ. Ա. Ի բաժակի ֆուտպոլի մրցաշարքի Գ. հանգրուանի երէկուան դարձի մրցումներուն, մեծագոյն անակնկալ արդիւնքը արձանագրող կազմը եղաւ ԱԷՔ Աթէնք, որ իր դաշտին վրայ, աւելի քան 32 հազար համակիրներու ներկայութեան 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք, մրցաշարքէն դուրս ձգեց Պայէր Լեւերքուզընը: Երթին, յունական կազմը Գերմանիոյ մէջ անակնկալի բերած էր դաշտին տէրերը, 4-4 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելով անոր հետ: Արժանօրինցի Ֆերանտօ Նաւաս (17րդ) եւ Վասիլիս Թասարօս (49րդ) նշանակեցին երէկուան մրցումին ԱԷՔի երկու անպատասխան կոլերը:

Հակառակ երթին Յունաստանի մէջ Օլիմփիաքոսի հետ իր արձանագրած հաւասարութեան (2-2), Լիվլըփուլ իր դաշտին՝ «Էնֆիլտ» մէջ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը, աւելի քան 35 հազար համակիրներու ներկայութեան: Ըմիլ Հէպի (28րդ) եւ Նիք Պարմաի (60րդ) նշանակեցին անգլիական կազմին երկու անպատասխան կոլերը:

Մեծագոյն պարտութիւն կրող կազմը եղաւ Համպուրկ, որ իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն Ա. Էս. Ռոմայն, 48 հազար համակիրներու ներկայութեան: Ալտայի (29րդ), Մարքօ Տելվէքիօ (58րդ) եւ Ուոլթըր Սամուէլ (60րդ) նշանակեցին իտալական կազմին երեք անպատասխան կոլերը:

Երթին, Սկովտիոյ մէջ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրած Քայլերպարտուրըն, սպառնկեց Գ. հանգրուանի իր տոմար, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռեյնալդըրզը, Միլուոքի Քլոս (8րդ), Անտրէաս Պաք (65րդ) եւ Վրաթիլաւ Լոքվէք (79րդ) նշանակեցին գերմանական կազմին անպատասխան երեք կոլերը:

Երթին, Պելճիքայէն 2-0 արդիւնքով յաղթական վերադարձած Պարսելոնա, 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք իր հիւրին՝ Ֆ. Ք. Պրիմի հետ, առանց դժուարութեան անցաւ յաջող հանգրուան: Ռիվալտօ նշանակեց Պարսելոնայի կոլը (17րդ) փենայթիով, իսկ Կէրք Վէրիէյէն՝ Պրիմի կոլը (27րդ): Հիւր կազմը մրցումը աւարտեց տասը մարզիկով Փիթր Վան Տեր Հէյտէնի կարմիր քարտ ստանալէն ետք (68րդ):

Մրցաշարքէն դուրս մնացողներուն շարքին եղաւ նաեւ Հերթա Պերլին, որ 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ինթեր Միլանէն: Երթին, գերմանական կազմը իր դաշտին վրայ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էր Ինթերի հետ: Ալվարօ Ռեքոպա (6րդ) եւ Հաքա Շիքիւր (89րդ) նշանակեցին Ինթերի կոլերը, իսկ Ռոնէ Թրեքոքը՝ Հերթայի կոլը (54րդ):

Քաթանիայի կողմէ նշանակուած կոլը (28րդ) բաւարար եղաւ, որ անոր կազմը՝ Սելթա Վիլո 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք մրցաշարքէն դուրս ձգէ Շախթար Տոնթըքը (Ուրբանիա), երթի մրցումը վերջ գտած էր 0-0 արդիւնքով:

Ստորեւ՝ Գ. հանգրուանի դարձի մրցումներուն արդիւնքները (փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, իսկ գլխագիրով նշուած խումբերը կ'անցնին յաջորդ հանգրուան (Գ. հանգրուան).

- ՔԱՅՉԸՐՍԼԱՈՒԹԸՐՆ (Գերմանիա) - Ռեյնալդըրզ (Սկովտիա) (0-1) 3-0
- ՍԼԱԻՒՍ ՓՐԱԿԱ (Չեխիա) - Օսիլէք (Խրուսթիա) (0-2) 5-1
- ԱԷՔ ԱԹԵՆՔ (Յունաստան) - Պայէր Լեւերքուզըն (Գերմանիա) (4-4) 2-0
- ՊԱՐՍԵԼՈՆԱ (Սպանիա) - Ֆ. Ք. Պրիմ (Պելճիք) (2-0) 1-1
- Լօլան Սփոր (Չուիցերիա) - ՆԱՆԹ (Ֆրանսա) (3-4) 1-3
- ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ (Իտալիա) - Հերթա Պերլին (Գերմանիա) (0-0) 2-1
- Ռոպինսոն (Նորվեգիա) - ԱԼԱԻԷՍ (Սպանիա) (1-1) 1-3
- Վերտըր Պրեմըն (Գերմանիա) - ՊՈՐՏՕ (Ֆրանսա) (1-4) 0-0
- ՍԵԼՏԱ ՎԻԿՕ (Սպանիա) - Շախթար Տոնթըք (Ռուսիա) (0-0) 1-0
- ՓԱՌՔ Սայրանիքս (Յունաստան) - Փ. Ս. Վ. ԱՅՆՏՀՈՎԸՆ (Հոլանտա) (0-3) 0-1
- Համպուրկ (Գերմանիա) - Ա. ԷՍ. ՌՈՄԱ (Իտալիա) (0-1) 0-3
- ԼԻՎԸՐՓՈՒԼ (Անգլիա) - Օլիմպիաքոս (Յունաստան) (2-2) 2-0
- ՌԱՅՕ ՎԱՅԵՔՈՎԱ (Սպանիա) - Լոքոմոթիվ Մոսկուա (Ռուսիա) (0-0) 2-0

ՔԱՊՈՒԼ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ԶԵՆԹԱՐԿԵ ՌԻՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԵՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐ ԿԵՑՈՒԾՔԸ

ԿԸ ԶԱՅՏԱՐԱՐԵՆ ԹԱԼԵՊԱՆՆԵՐԸ

Աֆղանիստանի մէջ իշխող Թալիբական իսլամական շարժումը յայտարարեց, որ պատժամիջոցներուն խստացումը պիտի չպարտադրէ, որ քաղաքի վերատեսուչներուն ենթարկէ սեղանային Ռուսամ Պրն Լատենի պաշտպանելու եւ շարտաքնելու իր կեցումը:

Թալիբականի կառավարութեան տեղեկատուութեան փոխ նախարար Ապտէլնահման Հոթաբ դիտել տուաւ, որ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ կողմէ քաղաքի դէմ պատժամիջոցները խստացնելու բոլոր ճիգերը ապարդիւն պիտի մնան եւ թէ քաղաքի դէմ պիտի դնէ անոնց:

Հոթաբ աւելցուց, որ Աֆղանիստան տեղի պիտի չտայ ճնշումներու դիմաց:

Թալիբականի կեցումներն մասին յայտարարութիւնը կը հրատարակուէր այն պահուն, երբ Միացեալ Նահանգներ եւ Ռուսիա կը պատրաստուին ճիգերը միացնելու, աւելի խիստ ամպարկո մը հաստատելու համար Թալիբականի իշխանութեան դէմ, որպէսզի Ռուսամ Պրն Լատենի յանձնէ:

Ուաշինգթոնի եւ Մոսկուայի միացեալ բանաձեւի առաջարկ մը պիտի ներկայացնեն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին, պահանջելով, որ պէնքի վաճառքի ամպարկո հաստատուի քաղաքի դէմ, որպէսզի արտայաննեն սեղանային, որ ամբաստանուած է աներկեան թիրախներու դէմ խափանարարական ու ահաբեկչական գործողութիւններ կազմակերպելու յանցանքով: Առաջարկուած ամպարկոն պիտի խստացնէ նաեւ նախապէս հաստատուած պատժամիջոցները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԿԱՏԵԼՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՊԱՆԱԼԻՔՆԵՐԸ ԻՐԱՆԻՆ ԱԲԱՆՂԱԿԱՆ ԶԵՆՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ՇԱՐՑ Է

Կ'ԸՍԷ ԶՕՐ. ՄԱՆԻԼՈՎ

Ռուս բարձրաստիճանի փորձարար Վալերի Մանիլով Երէկ «անընդունելի» նկատած է Մոսկուայի դէմ պատժամիջոցներ հաստատելու ամերիկեան սպառնալիքները, եթէ անիկա Իրանի աւանդական պէնքեր ծախէ՝ 5 տարուան դադարէ մը ետք:

Մանիլով, որ Ռուսիոյ սպայակոյտի փոխ հրամանատարն է, շեշտած է, թէ Թեհրանի պէնքերու վաճառումը ներքին հարց մըն է:

Օր մը առաջ, Ռուսիա Մ. Նահանգներուն վտանգեցուցած էր, թէ յարձակողական բնույթի պէնքեր պիտի չծախէ Իրանի, հաւանաբար Թեհրանի պէնքերու հայրենային վերսկզբնային Մոսկուայի անցեալ ամառուս նորոշումին:

Մ. Նահանգներու պաշտպանութեան մարզի պաշտօնատարներ Պրիւքսելի մէջ յայտնած են, թէ Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարարները՝ Իկոր Սերկէեւ եւ Ռիլիոմ Քոնէ՛լ 20րէքշաբթի օր ունեցած են տեսակցութիւն մը, որուն ընթացքին Սերկէեւ:

ԳՈՐԾԱՐԱՐ Ա. ՂԱԶԱՐԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

Միշտ թերթին համաձայն, Ղազարեան ըսած է, որ Թուրքիա նկատի առնէ Հայկական Սփիւռքը եւ պէտք է թողնուի, որ երրորդ երկիր մը միջամտէ մեր հարցերուն: «Մենք յոգնած ենք այս պահանջներէն եւ կ'ուզենք խղաղութեամբ ապրել Թուրքիոյ հետ», ըսաւ ան:

Պատասխանելով լրագրողներու այն հարցումին, թէ ինչո՞ւ Հայաստան կը շարունակէ լուռ մնալ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւին առաջարկման մասին, Ա. Ղազարեան ըսած է, որ «Հայաստան սոված է: Սփիւռքի մէջ ծայրայեղականները դրամ կը զրկեն Հայաստանի սոված փողովուրդին: 3,5 միլիոն Հայեր կ'ապրին Հայաստանի, իսկ 6,5 միլիոն Սփիւռքի մէջ: Հայաստան շատ աղքատ երկիր է: Սփիւռքի փողովուրդը չ'ուզէր, որ մենք զրական խօսինք Թուրքիոյ մասին, հակառակ պարագային անոնք պիտի կենցեան դրամի առաքումը»:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

Շիրակի թեմի հոգեւոր առաջնորդ Միքայիլ Օ. Վրդ. Աջապահեանի հոգեհանգրստեան աղօթքէն ետք, ներկայանալով մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին անմեղ զոհերու յիշատակը:

Այնուհետեւ նախագահ Քոչարեան եւ անոր ուղեկցող պատերազմի թիրախները մասնակցեցան Գիւմրիի մէջ վերակառուցումը բնակարանի մը բացման հանդիսութեան: Տեղի ունեցաւ նաեւ ծանօտանկումի արարողութիւն:

Նախագահ Քոչարեան մասնակցեցաւ նաեւ Պարոյր Սեւակի անուան նորակառոյց դպրոցի բացման արարողութեան: 1988ի երկրաշարժին առիթով նոյն օրը հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ Ս. Էջմիածինի Մայր տաճարին մէջ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի գլխավորութեամբ:

(ԱՐՄԵՆՓԸՄ)

յայտնած է, որ Մոսկուայի միայն պաշտպանողական բնույթի պէնքեր պիտի ծախէ Իրանի:

Մոսկուայ վերջերս որոշած էր հրաժարի 1995ի մէկ համաձայնագրէն, որ կը վերաբերէ Իրանի աւանդական պէնքեր չվաճառելու հարցին:

Ամերիկեան արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարները այս շաբաթ Մոսկուայ այցելած են հարցին գծով Ուաշինգթոնի մտահոգութիւնները փոխանցելու համար եւ ապահովելու համար, որ Իրանին պէնքի որեւէ հայթայթում չընդգրկէ այնպիսի արհեստագործութիւնները, որ կրնայ Թեհրանի «Մահապ - 3» հրթիռները բարելաւել: Անիկա ներկայիս մշակուող ընթացքի մէջ կը գտնուի եւ շուրջ 1500 քմ. տարողութիւն ունի:

Այլ համաձայնութիւններ կ'արգիլեն Մոսկուայի, որ Իրանի կորիպային, քիմիական կամ կենսաբանական պէնքեր եւ արհեստագործութիւն ծախէ: Ըստ Մ. Նահանգներու, Իրան կորիպային պէնքերու գործօն ծրագիր մը ունի:

Սերկէեւ, որ կ'ակնկալուի, որ մօտ ամենէն Թեհրան այցելէ, երեքշաբթի օր ՕՊՍՆի կեղծուստեղին այցելութեան մը առիթով թղթակցներու յայտնած է, որ Մոսկուայ կառ-

չած պիտի մնայ Իրանի պէնքերու փոխանցումին գծով իր միջազգային պարտաւորութիւններուն:

Մակայն Ռուսիա պէնքերու շահաբեր շուկային մէջ կ'ուզէ դրամ շահիլ եւ կը թուի օգտուիլ Սպիտակ Տան մէջ նախագահ Պիլ Քլինթոնի յարգող ճշդումին ուշացումին:

Իրանի պէնքերու վաճառքը վերսկսելու Մոսկուայի ճիգերուն կողքին, անիկա նաեւ կը փորձէ Արեւմուտքին կողմէ կասկածով դիտող կարգ մը երկիրներու հետ (Իրան, Իրաք եւ Հիւսիսային Քորէա) յարաբերութիւններուն թափ տալ:

Նախագահ Վլադիմիր Փութին ընդունած է Լիպիայ այցելութեան հրաւեր մը, թէեւ արեւմտեան քաւի մը պէտքերուն նոյնպէս կը փորձեն թափ տալ Լիպիոյ հետ իրենց յարաբերութիւններուն ՄԱԿի պատժամիջոցներուն անցեալ տարի վերացումին ետք:

Միջազգային Գնահատումներու Հիմնարկին տնօրէնը Ալեքսանտր Քոնովալով, յայտնած է, թէ Ռուսիա աւելի գործօն արտաքին քաղաքականութիւն մը կը հետապնդէ անցեալի Մ. Նահանգներու վիշտումներ կատարելէ ետք՝ փոխարէնը ոչինչ ստանալով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԽԱՉԲԱՌ-ԹԻԻ 4734

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ՇՈՒԴՈՒՆԱԿԱՆ | ՈՒՂԱՇԱՅՅԵԱՑ |
|--|--|
| 1. Վանքի հանդերձապետ: | 1. Արարական կուսակցութիւն - Պարուտակ: |
| 2. Պողոտեակ - Նախաճաշիկ: | 2. Արական անուն - Գրտակ: |
| 3. Արական անուն - Կրկնուած բաղաձայններ - Գեղմ: | 3. Գունատ - Ստինք: |
| 4. Վաչկատուն, գնչու: | 4. Փոքր մամուլ - Նմանապէս: |
| 5. Լիբր, անպատկառ - Հասկցիբ: | 5. Շաղկապ - Մարտի քաղաքներէն: |
| 6. Որ - Հակած - Ակնայ: | 6. Քաղցկեղ - Որոճացող կենդանի: |
| 7. Գրարար՝ հոս - Բերան փոթոթող համ - Լեցուն: | 7. Ասիական երկիր - Համադասական շաղկապ: |
| 8. Այբուբենէն - Անասուհի կուզ: | 8. Փոքրացնող մասնիկ - Յետոյ - Յրանսական գետ: |
| 9. Պերճ Պոռչեանի ծննդավայրը - Յարարբերական դերանուն: | 9. Կարծր քարտեսակ - Զրային մեծ թռչուն: |
| 10. Ճափոնական դասական թատրոն - Ամուսին: | 10. Խաղաթուղթի մէկ-նոց - Ճահճատեղ: |
| 11. Օղի բաղաձայնից տարրերէն - Աչք: | 11. Մառայամիտ - Կրկնուած բաղաձայններ: |

ԹԻԻ 4733

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

ՍԱԿԱՐԱՆ

Պէլյուրի սակարանից մէջ օտար դրամագիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50 լ.ո.
Իրաքեան տինար	50,00 - 51,00 լ.ո.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00 լ.ո.
Քուէյթեան տինար	4886,42 - 4890,42 լ.ո.
Յորդանանեան տինար	2124,24 - 2128,24 լ.ո.
Ս. Մ. Էմիրութեանց տիրիւմ	408,43 - 410,42 լ.ո.
Սէուական դիալ	399,90 - 401,99 լ.ո.
Օմանեան դիալ	3990,00 - 4010,00 լ.ո.
Էքսպրեան դիալ	412,15 - 416,15 լ.ո.
Եգիպտական կիւն	400,72 - 402,72 լ.ո.
Անգլիական սթերլին	2181,99 - 2185,84 լ.ո.
Գերմանական մարք	687,47 - 681,16 լ.ո.
Հոլանտական ֆլորին	609,65 - 613,24 լ.ո.
Ֆրանսական ֆրանք	203,74 - 207,94 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	887,32 - 882,25 լ.ո.
Պելճիքական ֆրանք	31,63 - 32,68 լ.ո.
Դանիական քրոնր	230,22 - 250,12 լ.ո.
Սպանական փէպէթա	8,02 - 9,04 լ.ո.
Թրքական լիրա	0,0365 - 0,0370 լ.ո.
Կիպրական փաուստ	2351,79 - 2355,33 լ.ո.
Իտալական հապար լիր	688,15 - 692,38 լ.ո.
Ճափոնական հապար եֆն	13057 - 13061 լ.ո.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2452 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ո.
Քանադական տոլար	985,50 - 989,13 լ.ո.
Աւստրալիական տոլար	825,88 - 829,83 լ.ո.
Եւրօ	1345,91 - 1349,08 լ.ո.

ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	92,000 - 102,000 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի	81,000 - 91,000 լ.ո.
Մեքսիկական փէստ	496,000 - 503,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	13,250,000 - 13,750,000 լ.ո.
Մէկ օսն ոսկի	273,05 - 275,40 \$
Մէկ օսն արծաթ	4,73 - 4,77 \$

ՍԱԼԵՏԵՐԻ ԲԱԺՆԵԾՈՒՂԵՐ

Ա. կարգի	Գիճի Ա. ճշդում	Գիճի Բ. ճշդում
7 1/8		7 1/4
Բ. կարգի բաժնետիր		
7 3/8		7 3/8